

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն քիվ 8(18/19)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի 20.05.2019թ.կայացած նիստի

խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 21-ը :

Օրակարգ՝

1. Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի, Կիրառական էլեկտրադինամիկա և մոդելավորում ամբիոնի վարիչների հաշվետվությունները 2018/2019 ուսումնական տարում ամբիոններում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ:
Ձեկ.՝ ամբիոնների վարիչներ
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների հաշվետվությունները 2018/2019 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ասպիրանտուրայում ուսումը շարունակելու համար ատեստավորման հարցը:
3. Տեղեկատվություն 2019/2020 ուս.տարվա ֆակուլտետի ընդունելության տեղերի վերաբերյալ:
Ձեկ՝ .դեկան, Խ.Վ.Ներկարարյան
4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1 - ին հարցի կապակցությամբ..

Լսեցին- Կիրառական էլեկտրադինամիկա և մոդելավորում ամբիոնի դոցենտ Ֆ.մ.գ.թ. Գ.Բ. Ալավերդյանի հաշվետվությունը 2018-2019 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ: Գ.Բ. Ալավերդյանը ներկայացրեց համապատասխան ամբիոնում մեկ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ըստ ուսումնամեթոդական և գիտական ոլորտների: Լսեցին նաև Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ. Մ. Ղամբարյանի հաշվետվությունը 2018-2019 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ: Ամբիոնի վարիչը ներկայացրեց համապատասխան ամբիոնում մեկ տարում կատարած

աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ըստ ուսումնամեթոդական և գիտական ոլորտների:

Որոշեցին.- Հավանություն տալ Կիրառական էլեկտրադինամիկա և մոդելավորում ամբիոնի ամբիոնի դոցենտ՝ Գ.Բ.Ալավերդյանի հաշվետվությանը և 2018/2019 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները գնահատել բավարար: Հավանություն տալ Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ. Մ. Ղամբարյանի հաշվետվությունը և 2018/2019 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները գնահատել բավարար:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ Նարեկ Մամիկոնյանի (*գիտ. դեկ.*՝ պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյան**) հաշվետվությունը ասպիրանտական առաջին տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումն ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին - Ընթերցվեց ասպիրանտի գիտական ղեկավար, պրոֆեսոր Վ.Շ. Մելիքյանի կարծիքը, ըստ որի ասպիրանտը կատարել է ասպիրանտական առաջին տարվա համար պլանով նախատեսված աշխատանքները: Մասնակցել է կրեդիտային համակարգով նախատեսված դասընթացներին, և ստացել է անհրաժեշտ կրեդիտներ: Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

Որոշեցին - Ասպիրանտ Նարեկ Մամիկոնյանի ասպիրանտական առաջին տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

Լսեցին - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ Հենրիկ Պարսամյանի (*գիտ. դեկ.*՝ պրոֆեսոր **Խ.Վ. Ներկարարյան**) հաշվետվությունը ասպիրանտական առաջին

տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին - Ասպիրանտի գիտական ղեկավար, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը նշեց, որի ասպիրանտը կատարել է ասպիրանտական առաջին տարվա համար պլանով նախատեսված աշխատանքները:

Որոշեցին - Ասպիրանտ Հենրիկ Պարսամյանի ասպիրանտական առաջին տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան պրոֆ. Խ. Վ. Ներկարարյանի հաղորդումը ֆակուլտետում ընդունելության տեղերի վերաբերյալ:

Արտատայտվեցին.- Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ. Վ. Ներկարարյանը նշեց, որ 2018/2019 ուսումնական տարում ֆակուլտետին հատկացվել է 102 մրցութային տեղ, որոնցից 60-ը ռադիոֆիզիկա, 21-ը՝ էլեկտրոնիկա, 21-ը՝ ռադիոտեղնիկա և կապ.:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունելի գիտություն:

Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին – Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ավագ լաբորանտ Մանուշակ Լերմոնտի Մովսիսյանի ատենախոսության <<Տերահերցային ալիքների ազատ էլեկտրոններով լազերի հետազոտումը էլեկտրոնների զծային արագացուցչի հիման վրա>> թեմայի ճշգրտման հարցը:

Արտահայտվեց – Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը նշեց, որ ելնելով կատարած աշխատանքների բովանդակությունից նպատակահարմար է Մ. Մովսիսյանի ատենախոսության թեման ճշգրտել՝ «Հզոր տերահերցային

Ճառագայթման աղբյուրի ստեղծման հնարավորությունը գործող գծային արագացուցչի հիման վրա» ձևակերպմամբ, որը համապատասխանում է Ա.04.03 «Ռադիոֆիզիկա» մասնագիտությանը:

Որոշեցին – Մանուշակ Լերմոնտի Մովսիսյանի ատենախոսության թեման ճշգրտել «Հոոր տերահերցային ճառագայթման աղբյուրի ստեղծման հնարավորությունը գործող գծային արագացուցչի հիման վրա» ձևակերպմամբ՝ Ա.04.03 «Ռադիոֆիզիկա» մասնագիտությամբ:

*Խորհրդի նախագահ,
Ֆ.Վ.Գ.Պ. ԱրոնՖեստր*

ԽՎ.Ներկարարյ ան

*Գիտքարտուղար,
Ֆ.Վ.Գ.Թ.*

Մ.Մ. Ալեքսանյան